Արձանագրություն N 3

«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴՍ-ԳԼ-21/36» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.08.2021թ., ժամը՝ 16:00-ին, ք. Երևան, Աճառյան 2, 212 սենյակ հասցեում

Գնահատող հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝

- Մ. Մկրտչյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

- Դ. Զաքարյան
- Կ. Դավթյան

Քարտուղար՝ Էլինա Պողոսյան

«ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴՍ-ԳԼ-21/36» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Է. Պողոսյան)

1. «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴՍ-ԳԼ-21/36» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:

2. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

3.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ **«ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴՍ-ԳԼ-21/36»** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

1. «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴՍ-ԳԼ-21/36» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:

(Է. Պողոսյան)

1.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

1.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

1.3 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

1.4 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴՍ-ԳԼ-21/36» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ***բացառությամբ հետևյալ դեպքերի.***

- **«ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ** -ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջող փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ձեր կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ հավելված 1.1-ում արտադրողի անվանումը սունյակում լրացված է երկրների մասին տեղեկություն, մինչդեռ սույն ընթացակարգի հրավերով երկրների մասին տեղեկություն չի պահանջվել, ուստի անհրաժեշտ է արտադրողի անվանումը սունյակում լրացնել հրավերով պահանջվող տեղեկատվությունը:

- **Արթուր Հարությունյան Գագիկի ԱՁ** -ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջող փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ձեր կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ հավելված 1.1-ում արտադրողի անվանումը սունյակում լրացված է ապրանքի անվանումը, մինչդեռ սույն ընթացակարգի հրավերով պահանջվել է լրացնել արտադրողի անվանման մասին տեղեկություն, ուստի անհրաժեշտ է արտադրողի անվանումը սունյակում լրացնել հրավերով պահանջվող տեղեկատվությունը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ -ին և Արթուր Հարությունյան Գագիկի ԱՁ -ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ իսկ շտկված տարբերակն ուղարկել elinapoghosyan@yandex.com էլեկտրոնային հասցեին:

Հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով «ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ին և և Արթուր Հարությունյան Գագիկի ԱՁ -ին ուղարկեց արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցումները:

23.08.2021թ., ժամը 10:30-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ «ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ի և և Արթուր Հարությունյան Գագիկի ԱՁ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները և վերջիններիս հայտերը գնահատեցին բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Է. Պողոսյան)

2.1 Քանի որ **«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար** «Դիսպենսեր սարքերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴՍ-ԳԼ-21/36» ծածկագրով** ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետերի կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը **23.08.2021թ.**-ին որոշեց կասեցնել հայտերի բացման նիստը և գների նվազեցման նպատակով 26.08.2021թ. ժամը 15:00-ին Աճառյան 2, 212 սենյակում բավարար գնահատված և տվյալ չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած բոլոր մասնակիցների հետ կազմակերպել միաժամանակյա բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը նշված մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցեց նշված բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

2.1 27.08.2021թ. ժամը 15:00-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցություններին մասնակցելու համար ծանուցված մասնակիցներից ներկայացել էր միայն «ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ» ՍՊԸ-ն:

2.2 Բանակցության արդյունքում «ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ» ՍՊԸ-ն հայտով առաջարկված գնային նվազեցում չկատարեց և մնաց ամփոփուխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴՍ-ԳԼ-21/36» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Է. Պողոսյան)

3.1 27.08.2021թ. հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, armeps (www.armeps.am) էլեկտրոնային գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴՍ-ԳԼ-21/36» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել «ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ» ՍՊԸ -ին:

3.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴՍ-ԳԼ-21/36» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

3.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանվել է 5 օրացուցային օր:

3.4 Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետը լրանալուց հետո ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել կից գրությամբ պայմանագրի նախագիծը երկու օրինակից, ինչպես նաև որակավորման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր), պայմանագրի կատարման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Է. Պողոսյան)

4.1 «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴՍ-ԳԼ-21/36» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 , դեմ՝ 0:

5. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Է. Պողոսյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Է. Պողոսյան)

6.1 «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴՍ-ԳԼ-21/36» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագրեր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Աճառյան 2 212 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Մկրտչյան

հանձնաժողովի գնահատող անդամներ՝ _____ Դ. Զաքարյան

_____ Կ. Դավթյան

հանձնաժողովի քարտուղար՝ _____ Է. Պողոսյան